ԿԱՐԾԻՔ

ԱՐԹՈՒՐ ԱՐՄԵՆԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ << ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԱՐԴԱՐԱՑԻ ԲԱՇԽՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ>> ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 <<ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հարկային համակարգի արդյունավետ գործունեության առումով կարևոր խնդիրներից մեկն է հանդիսանում հարկային բեռի արդարացի բաշխումը: Դրա օպտիմալ մակարդակի ձևավորումը պետության կարևոր խնդիրներից մեկն է հանդիսանում, որի լուծումն ապահովում է, մի կողմից, տնտեսության բնականոն գործունեությունը, և մյուս կողմից, պետության գործառույթների պատշաճ իրականացումը: Հարկային բեռի գնահատման և դրա բաշխման հարցերը հանդիսանում են հարկային քաղաքականության կատարելագործման և դրա արդյունավետության բարձրացման առանցքային ուղղություններից: Ընդ որում, դրա կարևորությունը պայմանավորված է ոչ միայն բյուջետային եկամուտների համալրման անհրաժեշտությամբ, այլ նաև տնտեսավարող սուբյեկտների գործունեության համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորման և, վերջին հաշվով, տնտեսական աճի ապահովման հրամայականով: Այս տեսանկյունից, խնդրի կարևորությունն առավել քան ակնհայտ է Հայաստանի Հանրապետության պարագայում, որի լուծումն, ակնայտորեն, պետք է հիմնված լինի տնտեսագիտական համապատասխան հիմնավորումների և գնահատումների վրա: Գրախոսվող աշխատանքում իրականացված հետազոտությունները նվիրված են հարկային բեռի արդարացի բաշխման հիմնախնդիրների ուսումնասիրությանը և դրանց լուծմանն ուղղված նոր մոտեցումների մշակմանը, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի ***արդիականությունը և հրատապությունը***:

Ատենախոսության ***կառուցվածքը*** հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով

պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ներածական մասում դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները, Այստեղ բնութագրված են տեսական ու մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսության ***առաջին՝ <<Հարկային բեռի տեսամեթոդաբանական հիմքերը>>*** գլխում ուսումնասիրվել են հարկային բեռի էությունը և դասակարգման մոտեցումները, քննարկվել են հարկային բեռի արդարացի բաշխման հայեցակարգային մոտեցումներն ու տեսությունները հարկային քաղաքականության համատեքստում:

Հետազոտության ***երկրորդ՝ <<Հարկային բեռի արդարացի բաշխման և դրա կառավարման գերակայությունները ՀՀ-ում>> գլխում*** վերլուծության են ենթարկվել հարկային բեռի բաշխման մեխանիզմներն արտերկրում, գնահատվել եմ դրանց տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում, ներկայացվել են հարկային բեռի գնահատման ուղղությունները հանրապետությունում:

Աշխատանքի ***երրորդ՝ <<Հարկային բարեփոխումների ռազմավարական գերակայությունները ՀՀ-ում>> գլխում*** առաջարկվել են հարկային բեռի արդարացի բաշխման մոտեցումներ ԱԱՀ-ի և եկամտային հարկի մասով, ինչպես նաև հարկային արտոնությունների կառավարման գերակայությունները հարկային բեռի արդարացի բաշխման համատեքստում:

Հետազոտության արդյունքների ***հավաստիությունը*** պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքում մշակված մոտեցումները և արված առաջարկությունները հիմնված են քննարկվող հիմնահարցը ուսումնասիրող հայտնի մասնագետների աշխատությունների վրա, իսկ որպես տեղեկատվական հիմք ծառայել են այդ բնագավառին վերաբերող պաշտոնական և վիճակագրական նյութերն ու տվյալները: Ատենախոսությունում օգտագործված են վերլուծության

ժամանակակից մեթոդներ, որոնք, ակնհայտորեն, բարձրացրել են ստացված արդյունքների հավաստիության աստիճանը:

Աշխատության ***գիտական նորույթը*** կայանում է նրանում, որ գնահատվել են հարկային բեռի արդարացի բաշխման մոտեցումները եկամտային հարկի մասով և մշակվել են տարբերակներ հարկման տարբեր ռեժիմներում արդարության սկզբունքի պահպանման համար, առաջարկվել և հիմնավորվել է Հայաստանում գործող որոշ հարկատեսակների դիֆերենցված դրույքաչափերի կիրառումը, մշակվել են հարկային ծախսերի կառավարման ռազմավարական ուղղություններ և հասցեական ու ոլորտային հարկային արտոնությունների տրամադրման ուղիներ:

Հեղինակի կողմից մշակված մեթոդաբանական ու մեթոդական մոտեցումներն, արված առաջարկություններն ու ընդհանրացումներն ունեն ***տեսական և գործնական*** նշանակություն: Դրանք կարող են լայնորեն օգտագործվել տնտեսական կառավարման տարբեր մակարդակներում, դառնալ ինչպես ամբողջ տնտեսության, այնպես էլ նրա առանձին ոլորտների հետագա զարգացումը պայմանավորող խթանիչ տեղաշարժերի բացահայտման, դրանց ճիշտ նպատակաուղղման և տնտեսական կայուն աճի համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման արդյունավետ գործիք: Հետազոտության արդյունքների գիտագործնական կիրառության շրջանակները բավականին լայն են և ուշադրության արժանի:

Ատենախոսությունը զերծ չէ ***դիտողություններից***, որոնցից հատկանշական են հետևյալները.

1. Ատենախոսությունում հեղինակն իր եզրահանգումներում նշում է, որ հանրապետությունում ԱԱՀ-ին վերաբերող գլխավոր խնդիրներից մեկն այդ հարկատեսակի բարձր և ստանդարտ կերպով կիրառվող դրույքաչափի հետ է կապված, ինչն, ըստ հեղինակի, կրում է անարդար և ռեգրեսիվ բնույթ, քանի որ հարկի գումարը սոցիալապես անապահով մարդկանց ընդհանուր եկամուտներում ավելի մեծ տեսակարար կշիռ է կազմում (հարկային բեռն ավելի մեծ է), քան բարձր եկամուտներ ունեցող քաղաքացիների դեպքում:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ անուղղակի բոլոր հարկերին, անկախ դրանց դրույքաչափի բարձր կամ ցածր լինելուց, հատուկ է ռեգրեսիվ բնույթը, ինչն էլ այդ հարկատեսակների հիմնական թերություններից է հանդիսանում: Այս առումով, կարծում ենք, որ ԱԱՀ-ի դիֆերենցված դրույքաչափերի կիրառման վերաբերյալ հեղինակի առաջարկությունը ենթադրում է առավել խորը վերլուծություն:

2. Աշխատանքում հեղինակն օգտագործում է հարկային բեռի <<արդարացի>>, <<արդյունավետ>> և <<հավասար>> բաշխում հասկացությունները, մեր կարծիքով, ոչ բավարար խորությամբ ներկայացնելով դրանց տարբերությունները և նմանությունները: Կարծում ենք, նշված հարցը պետք է արժանանար հեղինակի ուշադրությանը:

3. Հեղինակի կողմից կատարված առաջարկությունները հիմնականում վերաբերում են հարկային դրույքաչափերի նվազեցմանը և, հետևաբար նաև բյուջետային եկամուտների կրճատմանն առնվազն կարճաժամկետ հատվածում: Կարծում ենք, նման առաջարկությունների ներկայացմանը զուգահեռ հեղինակը պետք է գնահատեր նաև բյուջետային եկամուտների հնարավոր կորստի չափը՝ պետության գործառույթների պատշաճ իրականացումը չվտանգելու նպատակով:

4. Աշխատանքում կատարված վերլուծությունների ընթացքում հեղինակն իր հիմնական ուշադրությունը սևեռել է հարկային բեռի արդարացի բաշխման հիմնահարցերին, առավել քիչ խորությամբ անդրադառնալով հարկային բեռի մակարդակին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արդյունքները: Դրանք հետապնդում են հարկային բեռի արդարացի բաշխման հիմնահարցերին նվիրված հետագա ուսումնասիրությունների ուղղությունների բացահայտման նպատակ:

Ա. Մաթևոսյանի թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն, ամբողջական և արժեքավոր հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակի մասնագիտական ու վերլուծական մակարդակն, ակնհայտորեն, բարձր է, ինչի մասին են վկայում ինչպես ատենախոսությունը, այնպես էլ դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են լայնորեն օգտագործվել հարկային համակարգի զարգացման ծրագրերի իրականացման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Ա. Մաթևոսյանի <<Հարկային բեռի արդարացի բաշխման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում>> թեմայով ատենախոսությունը համապատասխանում է <<Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի>> 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.02 <<Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում>> մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
06.05.2024թ.

Պարոն Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝
Բ. Գ. Թ.
ԵՊՀ գիտական քարտուղար

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

06.05.2024թ.